վերջ չդնէր. Նա իւր ծերութեան դրոշմն արդէն ընկալած՝ աչը բարձրացրեց, խաչակնքեց ամենքին, օրհնելով իւր հաւատարիմ ժողովրդին—փոքրիկ հօտին։ Պաշտօնական մարդիկ մօտեցան Նորին Վեհափառութեան և համբուրելով Նորա սուրբ աչը, շնորհաւորեցին Նորա գալուստն ի Բագու։ Որք են քաղաքագլուխ Պ. Դեսպօտ Զինովիչը, ոստիկանապետը, Մարդասիրական Ընկերութեան նախագահ Պ. Անտոնեանը, ուրիշ շատ հիմնարկութեանց ներկայացուցիչներ։ Այս տեղ էր ի հարկէ և Հայոց հոգեւորական դասը, որոց Բագուի Առաջնորդը ներկայացրեց Նորին Օծութեան։ Այս տեղ էին առաջին կարգի վաճառականներն՝ Հայ, Ռուս և Թուրք։

Վեհափառը ամենին ընդունեց հայրաբար և օրհնեց բոլորին։ Նորից բարձրացաւ ժողովրդեան ուրախական աղաղակը՝ «կեցցէ Վեհափառ Հայրապետը, կեցցէ Մակար առաջին»։

Կայարանի երկար սանդուխներով Վեհափառը քաղաքագլխի և նորա օգնականի օգնութեամբ իջաւ և մտաւ Կայսերական անուանեալ պատրաստուած սենեակն. և ապա նոտաւ քառաձի կառքը և երկու Խաչաբարձ քահանաներ ձիերով գնացին ընդ առաջ։ Հրաշալի տօնին ըստ ամենայնի պատշաճաւոր եղանակ էր։ Կառքը գնում էր հանդարտ, շրջապատուած ցիսնաչափ հեծելազօրքով և կանաչ կարմիր հագած 4 շաթիրներով. նորան հետեւում էին 150ի չափ կառքեր, որոնց մէջ տեղ երեւում էին հայկական վեղարներ։ Դիմաւորող ժողովրդին Վեհափառը օրհնում էր, խաչակնքելով նոցա։ Վեհափառի կառքից յետոյ գնում էին կառքերով Շամախւոյ նախկին և ներկայ Առաջնորդ, Թադէոս և Մեսրովբ Արքեպիսկոպոսները, Տփխիսի Առաջնորդ Արիստակէս եպիսկոպոսը, Շուշիի Առաջնորդ Կարապետ եպիսկոպոսը, Հաղարծնոյ վանուց վանահայր Պօղոս վարդապետը և գաւազանակիր Սահակ վարդապետը։ Բայց Բագուի ներկայ Առաջնորդ Մեսրովբ Արքեպիսկոպոսը շտապով անդաւ գնաց յեկեղեցին, թափօրը պատրաստելու, և պատրաստած, որոշեալ տեղումն մեծ հրապարակի առաջին կանգնած էր թափօրը։ Անցնելի փողոցներում տները զարդարուած էին եռագոյն դրօշակներով և ծաղիկներով։ Հոգեւորական դասը զգեստաւորուած սպասում էր հրապարակի վերայ, որի ամ-